

ՌԻՄԱ ՆԻԿՈԼԱՅԻ ՇԱԼՈՒՆՑ (1937-2021)

Կյանքից հեռացել է ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի երկարամյա աշխատակից, բ.գ. դ. Ռիմա Նիկոլայի Շալունցը: Նա ինստիտուտի միջին սերնդի ներկայացուցիչ էր, իր գիտական ողջ գործունեությունը ծավալել է ժամանակակից հայերենի բառապաշարի և տերմինաբանության, բառարանագրության, խոսքի մշակույթի ուսումնասիրության բնագավառում, հեղինակել է ուշագրավ մենագրություններ և բազմաթիվ հոդվածներ՝ տեսական և գործնական բնույթի:

Ռիմա Շալունցը ծնվել է Գորիսում 1937 թ. հոկտեմբերի 9-ին: 1944 թվականին ընդունվել է Գորիսի թիվ 2 միջնակարգ դպրոցը: Ավարտելուց հետո որոշ ժամանակ աշխատել է Գորիսի պետական թատրոնում՝ որպես լեզվի մասնագետ:

1961- 1965 թթ. սովորել է Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում, ապա ընդունվել ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ասպիրանտուրան՝ «Բառագիտություն և բառարանագրություն» մասնագիտությամբ: 1972 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Համանուն բառերը ժամանակակից հայերենում» թեմայով, իսկ 1994 թ.՝ դոկտորական ատենախոսություն «Զանգվածային լրատվության լեզուն և ոճը» թեմայով: Վերջինս լույս է տեսնում իբրև ուսումնասովանողական ձեռնարկ, որ գործածվում է բուհերում:

Ռիմա Շալունցի բուն մասնագիտությունը եղել է բառագիտությունը: Գիտական բարձր արժեք ունեն նրա ուսումնասիրությունները ժամանակակից հայերենի համանուն և հականիշ բառերի վերաբերյալ՝ դրանց դասակարգման, կառուցվածքի առանձնահատկությունների վերհանման և վերլուծության, ոճական արժեքի գնահատության տեսանկյունից: Նա ուշագրավ դիտարկումներ ունի արդի հայերենի տերմինային համակարգ համանիշության և բազմիմաստության վերաբերյալ. այդ հարցի վերաբերյալ նա ունի ուշագրավ դիտարկումներ:

Մնայուն, կրթության գործին օգուտ բերող աշխատություններ Ռիմա Շալունցի «Արդի հայերենի համանունների դպրոցական բառարանը» (Ե., 1980 թ.), որում ընդգրկված են ինչպես դպրոցական դասագրքերում, այնպես էլ հայ դասական և խորհրդային գրողների երկերում (19-րդ դ. 70-ական թթ. սկսած) գործածված համանուն բառերը:

Նա իր գործին նվիրված մասնագետ էր, բազմիցս հանդես է եկել մամուլում հանդիպող լեզվական սխալների և վրիպումների, դրանց վերացման, հայերենի անաղարտության վերաբերյալ հոդվածներով, որոնք նպաստ էին բերում հայերենի գրական նորմավորմանը: Ժամանակին լայն հնչեղություն ուներ «Մեր լեզուն, մեր խոսքը» հեռուստատեսային հաղորդաշարը, որն անդրադառնում էր հայերենին անհարազատ ոճերին, հոլովական ոչ ճիշտ կիրառություններին, կապակցելիության սխալներին և այլն. Ռ. Շալունցը ունեցել է իր մասնակցությունը այդ հաղորդաշարի աշխատանքներին:

Նա կառավարությանն առնթեր տերմինաբանական խորհրդի անդամ էր, ինստիտուտի տերմինաբանության և խոսքի մշակույթի բաժնի առաջատար գիտաշխատող, ակտիվ մասնակցություն էր ունենում գիտական տարբեր բնույթի հարցերի՝ ատենախոսությունների, գիտաժողովների և բաժնի, նաև ինստիտուտի գիտական խորհրդի նիստերի քննարկումներին, բազմիցս մասնակցել է տարբեր ընդգրկման գիտաժողովների և կոնֆերանսների: 2000 թ. նա բնակվում էր ԱՄՆ-ում, որտեղ և 2021թ. հունվարի 22-ին կնքել է իր մահկանացուն:

Ռ. Շալունցին ճանաչողները միշտ կհիշեն նրան, հայերենի անխոնջ ուսումնասիրողին, զուսպ, համեստ, աշխատասեր գիտնականին:

Բանասիր. գիտ. թեկնածու Ս. Վ. Պապիկյան